Զանգահարեք մեզ անվճար՝

1-800-511-2300

կամ այցելեք՝

dhcs.ca.gov/OPL

Անգլերեն, իսպաներեն, արաբերեն, հայերեն, կամբոջերեն / քմերերեն, կանտոներեն, պարսկերեն, հինդի, հմոնգերեն, ճապոներեն, կորեերեն, լաոտերեն, մանդարին, փենջաբի, ռուսերեն, տագալերեն, թայերեն և վիետնամերեն:

(գործում է շրջօրյա)

Կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղի ստուգման այս անվճար թեստերը անցնելու համար դուք պետք է.

- Բնակվեք Կալիֆոռնիայում:
- Բավարարեք տարիքային պահանջներին:
- Ունենաք առողջության սահմանափակ ապահովագրություն կամ չունենաք այն:
- Ունենաք համավճարով կամ ֆրանշիզայով առողջության ապահովագրություն, որը դուք չեք կարող թույլ տալ, կամ
- Ցածր ընտանեկան եկամուտ ունենաք:

Հայտարարություն խտրականությունից զերծ մնալու մասին

Կալիֆոռնիայի առողջապահական ծառայությունների դեպարտամենտը գործում է կիրառելի Դաշնային քաղաքացիական իրավունքի մասին օրենքներին համապատասխան և չի սահմանում որևէ խտրականություն՝ ըստ ռասայական պատկանելիության, մաշկի գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի:

Language Assistance Services

Si habla español, usted puede conseguir ayuda para entender este documento, hablando con su proveedor de atención primaria del programa EWC o llamando al Contratista Regional de su condado. Los teléfonos del Contratista Regional se encuentran abajo. Esta asistencia lingüística es gratis.

如果您說漢語，我們可以幫助您瞭解這份文檔。請諮詢您所在地EWC附近診所或當地負責聯絡人。當地負責人電話見下文，他們會免費提供說明服務。

1-800-511-2300
dhcs.ca.gov/EWC

© 2021 Department of Health Care Services.
All Rights Reserved.

Armenian

Կրծքի և արգանդի վզիկի քաղցկեղի անվճար զննումներ

EWC ծրագրի կողմից

Ո՞րն է «Յուրաքանչյուր կին կարևոր է» (EWC) ծրագիրը:

EWC ծրագիրը տրամադրում է կրծքի և արգանդի վզիկի քաղցկեղի անվճար զննում և հետագա բժշկական հսկողության ծառայություններ: Այն ներառում է մամոգրաֆիա, պապ և ՄՊՎ թեստեր Կալիֆոռնիայի իրավունակ բնակիչների համար:
Տարիքի հետ կրծքի և արգանդի վզիկի քաղցկեղի հավանականությունը մեծանում է, այդ պատճառով մարդիկ պետք է պարբերաբար հետազոտվեն՝ կրծքի և արգանդի վզիկի քաղցկեղի հայտնաբերման համար:

Ինչու՞ պետք է մամոգրաֆիա անցնեք:

- Կրծքագեղձի քաղցկեղը վաղ հայտնաբերելու դեպքում այն ավելի հեշտ է բուժել:
- Մամոգրաֆիան կարող է հայտնաբերել կրծքագեղձի ուռուցք, որը շատ փոքր է՝ ձեր կամ ձեր բժշկի շոշափելու համար:

Որքա՞ն հաճախ պետք է մամոգրաֆիա անցնեք:

- Եթե 40 տարեկան եք կամ ավելի մեծ, 1-2 տարին մեկ:
- Խորհրդակցեք ձեր բժշկի հետ, թե երբ և որքան հաճախ պետք է հետազոտվեք:

1-800-511-2300
dhcs.ca.gov/OPL

EWC ծրագիրը առաջարկում է անվճար.

- Մամոգրաֆիա
- Պապ-թեստեր
- ՄՊՎ թեստեր
- Պապ և ՄՊՎ համաթեստավորում
- Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ թեստեր

Խորհրդակցեք ձեր բժշկի հետ այն մասին, թե երբ և որքան հաճախ պետք է անցնեք կրծքի և արգանդի վզիկի զննում:

Կրծքագեղձի քաղցկեղի նախազգուշական նշանները և/կամ ախտանիշներն են.

- Կրծքագեղձի կամ թևատակի ելունդ, զանգված կամ այտուց
- Կրծքի չափի կամ ձևի փոփոխություն
- Մաշկի կառուցվածքի և գույնի փոփոխություն (կրծքի կամ պտուկի վրա փոսիկներ կամ խորշոմներ, կարմրություն, թեփուկավոր մաշկ կամ հաստացում)
- Պտուկի հետ քաշում կամ ինվերսիա
- Պտուկից արտաթորություն և/կամ
- Կրծքի ցավ:

Այս նշաններից կամ ախտանշաններից որևէ մեկի առկայության դեպքում անհապաղ դիմեք ձեր բժշկին:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս նախազգուշական նշանները և (կամ) ախտանշանները կարող են առաջանալ կրծքագեղձի քաղցկեղից բացի նաև այլ դեպքերում:

Ինչո՞ւ պետք է կատարեք արգանդի վզիկի քաղցկեղի զննում:

- Բջջային փոփոխությունների վաղ հայտնաբերումն ու բուժումը կարող է կանխել արգանդի վզիկի քաղցկեղը:
- Պապ-թեստը պարզում է արգանդի վզիկի բջիջների փոփոխությունները, որոնք կարող են քաղցկեղի պատճառ դառնալ:
- ՄՊՎ թեստը որոնում է վիրուսներ, որոնք կարող են առաջացնել արգանդի վզիկի բջիջների փոփոխություններ:

Որքա՞ն հաճախ պետք է կատարեք արգանդի վզիկի քաղցկեղի զննում:

- 21 և ավելի բարձր տարիքի անձինք պետք է հանձնեն Պապ-թեստը 3 տարին մեկ:
- 30 և ավելի բարձր տարիքի անձինք կարող են հանձնել
  - ՄՊՎ-թեստ 5 տարին մեկ, կամ
  - Պապ և ՄՊՎ թեստերը միասին 5 տարին մեկ, կամ
  - Պապ-թեստը 3 տարին մեկ:

Խորհրդակցեք ձեր բժշկի հետ, թե որն է ձեզ համար ճիշտ տարբերակը: